ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների վերապատրաստման «Կրակային պատրաստականություն» առարկայի դասընթացի

Քննարկվել և հաստատվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի «Հատուկ պատրաստականություն» կրթաճյուղի նիստում՝ արձանագրություն թիվ 4 01.06.2018թ.

ք. Երևան

2018թ.

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

ՀՀ ոստիկանության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների
վերապատրաստման **«Կրակային պատրաստականություն»**
առարկայի դասընթացի

h/h	Թեմաների անվանումը	Ժամաքանակն ըստ պարապմունքների ձևի			
		Ընդամենը	Դասախո-սություն	Գործ. պա-րապմունք	Սեմինար
1	2	3	4	5	6
1.	9մմ ատրճանակ «Մակարով»-ի մարտական տվյալները, մասերի նկարագրումը, աշխատանքը և նշանակությունը:	2	1	1	-
2.	Գործնական պարապմունք. «ԱՄ»-ի մասնակի քանդումը և հավաքումը:	2	-	2	-
3.	7.62մմ. արդիականացված ավտոմատ «Կալաշնիկով»-ի մարտական տվյալները, մասերի նկարագրումը, աշխատանքը և նշա-նակությունը:	2	1	1	-
4.	Ձեռքի բեկորային նռնակների տեսակները, նշանակությունը և աշխատանքը:	2	1	1	-
5.	Հրազենի հետ վարվելիս անվտանգության ապահովման միջոցները:	2	1	1	-
6.	9մմ «Մակարով» ատրճանակից հրաձգություն՝ նախապատրաստական և N1 վար-ժությունների կատարում	4	-	4	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	**14**	**4**	**10**	**-**

Կազմեց՝
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի «Հատուկ պատրաստականություն» կրթաճյուղի ավ. դասախոս, ոստ. փոխգնդապետ

_____ է. Խ. Մարտիրոսյան

Քննարկվել և հաստատվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի «Հատուկ պատրաստականություն» կրթաճյուղի նիստում արձանագրություն թիվ _____ 01.06.2018թ.
կրթաճյուղի պետ, ոստ. փոխգնդապետ

_____ Գ.Ա . Ջաղացպանյան

1.Դասընթացի ընդհանուր ծավալն ըստ պարապմունքի տեսակների:

Ուսումնական պլանին համապատասխան դասընթացի ուսումնասիրման համար հատկացված է 14 ժամ, որից՝

- դասախոսություն – 4 ժամ
- գործնական - 10 ժամ

2 Դասընթացի բովանդակության յուրացման մակարդակին ներկայացվող պահանջները:

Դասընթացի ավարտից հետո սովորողը պետք է կարողանա՝

1. ներկայացնել հրաձգության հիմունքները՝ հրազենի տակտիկա-տեխնիկական բնութագիրը;
2. տիրապետել հրազենի կառուցվածքին;
3. ցուցադրել հրաձգության գործնական հմտություններ;
4. գործնականում ապահովել հրազենի գործադրման անվտանգությունը:

3.Կապը ուսումնական պլանով նախատեսված այլ առարկաների հետ

Լինելով դասավանդվող մասնագիտական հիմնական առարկա դասընթացը սերտորեն կապված է ուսումնական պլանով նախատեսված այնպիսի առարկաների հետ, ինչպիսիք են «Ծառայության իրականացման մարտավարություն»-ը, «Իրավագիտության հիմունքներ»-ը, «Մանկավարժությունը և հոգեբանությունը ոստիկանության ծառայողի գործունեության մեջ», «Հատուկ տեխնիկա»-ն:

4. Դասընթացի ուսուցման մեթոդական ցուցումներ:

Ուսուցումն իրականացվում է դասախոսությունների, գործնական պարապմունքների տեսքով, որոնք անց են կացվում ինտերակտիվ մեթոդներով:

Դասավանդման ընթացքում օգտագործվում են տեսական նյութեր, դիդակտիկ պաստառներ:

Գործնական պարապմունքների ընթացքում պրակտիկ վարժությունների իրավիճակային առաջադրանքների միջոցով սովորողների մոտ ձևավորվում են գործնական անհրաժեշտ հմտություններ և ունակություններ, որոնք տեսական գիտելիքների միջոցով ամրապնդելով դառնում են առաջիկա արդյունավետ մասնագիտական գործունեության կարևոր պայման:

Սովորողներին հաղորդված գիտելիքների և հմտությունների իմացության ամրապնդումն ապահովելու համար ուսուցման արդյունքում անց են կացվում համալիր գործնական պարապմունքներ, որոնք ընթացքում վերահսկվում են դասախոսների միացյալ ուժերով:

5. Ուսումնական նյութի բովանդակությունը:

Թեմա 1 - 9մմ ատրճանակ «Մակարով»-ի մարտական տվյալները, մասերի նկարագրումը, աշխատանքը և նշանակությունը:

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը.

- 9մմ ատրճանակ «Մակարով»- ի նշանակությունը;
- ատրճանակի մարտավարա-տեխնիկական տվյալները;
- ատրճանակի կառուցվածքը;
- ատրճանակի մասերի նշանակությունը;
- ատրճանակի փամփուշտի կառուցվածքը;
- ատրճանակի մասերի և մեխանիզմների դիրքը մինչև լիցքավորելը;
- ատրճանակի մասերի և մեխանիզմների աշխատանքը լիցքավորելիս;
- ատրճանակի մասերի և մեխանիզմների աշխատանքը ապահովիչը միացնելիս;
- ատրճանակի մասերի և մեխանիզմների աշխատանքը կրակելիս;
- ատրճանակի մասերի և մեխանիզմների աշխատանքը կրակոցից հետո;

- ատրճանակի մասերի և մեխանիզմների աշխատանքը ինքնալիցքավորմամբ կրակելիս;
- ատրճանակի մասերի և մեխանիզմների աշխատանքը պահեստատուփի փամփուշտները վերջանալուց հետո
- ատրճանակի պիտույքները:

Թեմա 2 - 9մմ ատրճանակ «Մակարով»-ի մասնակի քանդումը և հավաքումը:

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը

1. 9մմ ատրճանակ «Մակարով»-ի ոչ լրիվ քանդումը;
2. ատրճանակի ոչ լրիվ քանդած վիճակում մասերի զննումը և հավաքումը;
3. ատրճանակի փամփուշտների ամբողջությունը;
4. քանդումը և հավաքումն ըստ նորմատիվային ցուցանիշների:

Թեմա 3 - 7.62մմ արդիականացված ավտոմատ «Կալաշնիկով»-ի մարտական տվյալները, մասերի նկարագրումը, աշխատանքը և նշանակությունը:

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը.

- 7.62մմ արդիականացված «Կալաշնիկով»- ի նշանակությունը;
- ավտոմատի մարտավարա-տեխնիկական տվյալները;
- ավտոմատի կառուցվածքը;
- ավտոմատի մասերի նշանակությունը;
- սվին դանակի կառուցվածքը;
- ավտոմատի պիտույքները:

Թեմա 4 – Ձեռքի բեկորային նռնակների տեսակները, նշանակությունը և աշխատանքը:

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը.

- ձեռքի բեկորային նռնակների նշանակությունը;
- նռնակների մարտավարա-տեխնիկական տվյալները;
- նռնակների մասերի և մեխանիզմների աշխատանքը:

Թեմա 5 – Հրազենի հետ վարվելիս անվտանգության ապահովման միջոցները:

Թեմայի շրջանակներում լուսաբանման ենթակա հարցերը.

- զենքի և զինամթերքի հետ վարվելու ընդհանուր կանոնները;
- հրազենի մարտական վիճակի ստուգումը;
- ծառայության ընթացքում հրազենի հետ վարվելու անվտանգության կանոնները;
- հրազենի կրման ընթացքում անհրաժեշտ պահպանման կանոնները:

Թեմա 6 – 9մմ «ՄԱԿԱՐՈՎ» ատրճանակից հրաձգություն : Նախապատրաստական և №1 վարժությունների կատարում::

Գրականություն

- «Կրակային պատրաստականություն» մեթոդական ձեռնարկ, Երևան 2009թ.;

- «Հրաձգության ուսումնական ծրագրում ընդգրկված վարժությունների ուսուցման օրինակելի մեթոդիկա» մեթոդական ձեռնարկ, Երևան 2010թ.;

- ՀՀ ոստիկանության պետի 20.04.2009թ. թիվ 911-Ա հրաման ՀՀ ոստիկանության ծառայողների «Հրաձգության ուսումնական ծրագիր»:

- «Մոտոհրաձգային ստորաբաժանումների կրակային պատրաստականության ուսումնական ձեռնարկ» հաստատված ՀՀ ՊՆ 14.04.2006թ. թիվ 446 հրամանով:

- А.Б. Жук «Энциклопедия стрелкового оружия» 2006г. г. Москва

- «Наставление по стрековому делу» 9мм пистолет Макарова 1968г.

- «Наставление по стрековому делу» 1985г.

- Р.Форд «Знаменитые винтовки мира» военные технологии 2005г. г.Москва:

- «Ոստիկանության ծառայողների կողմից մարտական զենքից հրաձգության առաջնության կազմակերպման և անցկացման կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ ոստիկանության պետի թիվ 1400-Ա հրաման, ք. Երևան 2012թ.:

- «Հրաձգության մարտավարություն» ուսումնական ձեռնարկ ՀՀ ոստիկանության կրթահամալիր, ք. Երևան 2015թ.: